Լիբանանի Հանրապետություն

ներմուծման վերաբերյալ ամփոփ

տեղեկագիր



Free Trade

Լիբանանը Եվրամիության հետ 2002 թվականի հունիսին ստորագրել է **Ասոցացման համաձայնագիր**, որը ուժի մեջ է մտել 2006 թվականից: 2014 թվականից սկսած՝ Լիբանանը այլևս չի օգտվում Եվրամիության «**Արտոնությունների ընդհանրացված համակարգ**» GSP ռեժիմից, քանի որ ուժի է մեջ է մտել **Եվրամիության հետ ազատ առևտրի մասին Համաձայնագիրը**:

Լիբանանը 2004 թվականին կնքել է **ազատ առևտրի համաձայնագիր Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի** հետ, որի կողմեր են հանդիսանում՝ **Իսլանդիան, Լիխտնշտեյնը, Նորվեգիան, Շվեյցարիան**: Լիբանանը ստորագրել է Ազատ առևտրի համաձայնագիր **Արաբական մեծ գոտու հետ**, որը ամբողջությամբ փոխարինում է արաբական երկրների հետ ստորագրված երկկողմանի ազատ առևտրի համաձայնագրերը, մասնավորապես՝ **Թունիսի, Մարոկկոյի, Եգիպտոսի, Իրաքի, Հորդանանի. Սիրիայի, Սուդանի,** ինչպես նաև **Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրների** հետ:

2016 թվականից Լիբանանը սկսել է ազատ առևտրի մասով բանակցություններ **Հարավային Ամերիկայի երկրների** ընդհանուր շուկայի՝ **MERCOSUR**-ի անդամ երկրների հետ:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Ավելացված արժեքի հարկի դրույքաչափը Լիբանանում 2018 թվականի հունվարի 1-ից **10%**-ից բարձրացել է ***11%***:

Լիբանան ներմուծվող ապրանքների մոտ 80%-ի համար նախատեսված են **5%** և ավելի ցածր մաքսատուրքի դրույքաչափեր: Լիբանանի **ներմուծման մաքսատուրքերին** ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այստեղ՝

http://www.customs.gov.lb/customs/tariffs/national/tariff1.asp

Լիբանանի **մաքսային ուղեցույցին** կարող եք ծանոթանալ այստեղ՝

http://www.customs.gov.lb/customs/laws_regulations/Trader_guides.asp

ՓՈՐՁԱՐԿՈՒՄ, ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

Լիբանանում **փորձարկման գլխավոր ազգային մարմիններն** են.

- **Արդյունաբերական հետազոտությունների Ինստիտուտի լաբորատորիաներ**, որոնք փոխկապակցված են Արդյունաբերության նախարարության հետ /բոլոր տիպի ապրանքների փորձարկում/,
- Գյուղատնտեսության նախարարության ներքո գտնվող **Գյուղատնտեսական հետազոտությունների Ինստիտուտի լաբորատորիաներ** /սննդամթերքի փորձարկում/,
- Տրիպոլիի և Հյուսիսային Լիբանանի առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության պալատի ներքո գտնվող **Որակի հսկողության Կենտրոն լաբորատորիա**,
- Զահլեի և Բեկաայի առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության պալատի ներքո գտնվող **Սննդի որակի Կենտրոն լաբորատորիա,**
- Բեյրութի ամերիկյան համալսարանի **Քիմիայի և դեղագործության լաբորատորիա**:

Լիբանանի ստանդարտների ինստիտուտը (**LIBNOR)** գործում է Արդյունաբերության նախարարության ներքո և միակ լիազոր մարմինն է, որն իրավունք է տալիս օգտագործելու Լիբանանի համապատասխանության նշանը (**NL Mark**): Այս նշանն ապացուցում է

ապրանքների համապատասխանությունը լիբանանյան ստանդարտներին: Համապատասխանության կամ որակի սերտիֆիկատները, որոնք տրամադրվում են օտարերկրյա կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են՝ ***SGS և Veritas***, նույնպես ընդունվում են Լիբանանում:

❗ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ստանդարտների և տեխնիկական կանոնակարգման հարցերով կարող եք հարցադրումներ ներկայացնել Լիբանանի ստանդարտների ինստիտուտ՝ LIBNOR

Հասցե՝ Maatouk Bldg

City Rama Street, Sin El-Fil

PO Box 55120Beirut, Lebanon

Tel: 961-1-485 927/8

Fax: 961-1-485 929

E-mail: info@libnor.org

Website: http://www.libnor.org

❗ Լիբանանի օրենքներով, որոշումներով, կարգավորումներով, ինչպես նաև կնքված համաձայնագրերով խստորեն արգելվում է Լիբանան ներմուծել հետևյալ ապրանքները.

- եղենափայտի սերմ և սածիլ /**լիբանանյան եղենափայտի տեսակի պաշտպանություն**/,
- հացի պատրաստման համար քիմիական հավելումներ /**առողջապահական միջոց**/,
- յոդ պարունակող սեղանի աղ /**առողջապահական միջոց**/,
- մի շարք քիմիական, հանքային, մետաղական ապրանքների թափոն, խարամ, մոխրի կտոր /**բնապահպանական միջոց**/,
- սև ցեմենտ և խարամ /**տեղական արտադրության պաշտպանություն/**,

- ուղևորափոխադրամիջոցներ, որոնց թողարկումից անցել է 8 տարի և ավելի, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ, որոնց թողարկումից անցել է 5 տարի և ավելի /**բնապահպանական միջոց**/,
- օգտագործված բժշկական և ճառագայթային սարքավորումներ /**առողջապահական միջոց**/,
- գրպանի կրակայրիչներ՝ գազով լիցքավորվող /**անվտանգության միջոց**/,
- անլար հեռախոսներ, որոնք ունեն 900 մեգահերց հաճախականության տիրույթում աշխատելու հնարավորություն /**տեխնիկական միջոց**/,
- ապրանքներ՝ կեղծ նշաններով և պիտակներով, որոնցում նշվում է ծագումը **/մտավոր սեփականության պաշտպանական միջոց/,**
- ապրանքներ, որոնք արտադրվել են կամ ծագել են Իսրայելում /**Արաբական Բոյկոտի միջոց**/:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության **առևտրաշրջանառությունը** Լիբանանի հետ **2017 թվականին** կազմել է 1.1 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 15.4 %-ով (2016 թվականին կազմել է 1.3 մլն ԱՄՆ դոլար): **2017 թվականին արտահանումը** Հայաստանի Հանրապետությունից Լիբանան կազմել է 0.25 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է **31.6%-ով** (2016 թվականին կազմել է 0.19 մլն ԱՄՆ դոլար): 2017 թվականին Լիբանանից Հայաստանի Հանրապետություն **ներմուծումը, ըստ ծագման երկրի հատկանիշի**, կազմել է 0.81 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ նվազել է **27.7%-ով** (2016 թվականին կազմել է 1.12 մլն ԱՄՆ դոլար):

2017 թվականին Հայաստանի Հանրապետությունից Լիբանան արտահանման ծավալների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապահովվել է հետևյալ ապրանքատեսակների հաշվին.

- **ջրեր՝ բնական կամ արհեստական, հանքային, գազավորված, չքաղցրացրած, սառույց և ձյուն,**
- **ոգելից խմիչքներ,**
- **խնամքի միջոցներ:**

2017 թվականին Լիբանանից Հայաստանի Հանրապետություն ներմուծված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են.

- **ադամանդ,**
- **շոկոլադ և այլ կակաո պարունակող սնունդ,**
- **սուրճ, սրճի թեփուկներ և հատիկների պատյաններ, սրճի փոխարինիչ,**
- **ադամանդ,**
- **բուսական ճարպ և ձեթ,**
- **պահածոյացված միրգ, ընկուզեղեն, հատապտուղ:**

! ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

http://www.libnor.gov.lb/ViewContentRecords.aspx?topicId=4&language=en

/Լիբանանի ստանդարտների ինստիտուտ/